ՀՏԴ 941.479.243
Հայոց պատմություն

Արմինե ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱրՊՀ պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

ԼՂԻՄ-Ի ՊԱՅՔԱՐՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ: ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ 1945-1991ԹԹ.

Հոդվածում հեղինակը քննության է ներկայացնում արցախահայության կողմից խորհրդային իշխանության տարիներին կազմված դիմումները, որոնց մեջ արտահայտված էր նրա գլխավոր պահանջը՝ ուղղել 1921թ. կատարված պատմական սխալը և մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից:
Հեղինակը հոդվածում կատարել է այն գլխավոր եզրահանգումը, որ արցախահայության համար առաջնահերթը ազգային խնդրի՝ այն է մայր հայրենիքի հետ Արցախի միավորումն էր. Գլխավոր խնդրին զուգահեռ դիմումի հեղինակները նշել են նաև Ադրբեջանի հակահայկական քաղաքականության արդյունքները և մարզի սոցիալ-տնտեսական կյանքում կուտակված բազմաթիվ խնդիրները: 1988թ., Քաղաքական նոր իրողություններով պայմանավորված, արցախահայությունը մտել է պայքարի նոր փուլ՝ հանդես գալով ավելի ակտիվ պահանջատիրությամբ: Հոդվածում հեղինակը փորձել է ցույց տալ, որ կազմակերպված խաղաղ հանրահավաքներում և նոր պահանջագիր- դիմումներում կրկին վերահաստատվել է այնառաջնահերթ ազգային խնդիրը, որի արմատները գալիս են 1921-ից՝ ուղղել կատարված պատմականան արդարությունը, հայեցի ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադրբեջանի կազմից և միավորել ՀՀ-ի հետ: Ի պատասխան դրա՝ Ադրբեջանի կողմից ոչ միայն ուժեղացվեց քաղաքական և սոցիալ-տնտեսական ճնշումների քաղաքականությունը, որն անընդմեջ դրսևորվել է խորհրդային իշխանության ողջ ժամանակահատվածում, այլև սանձազերծվել պատերազմ: Այսպիսով՝ արցախահայության պայքարը պատմականորեն արդարացված էր, այն անջատողական շարժում չէր և ոչ էլ ծագել էր հենց 1988-ին, ինչպես փորձում է ներկայացնել ադրբեջանական քարոզչամեքենան: Այդ պայքարը եղել է անընդմեջ, հիմնավորված՝ պատմական սխալն ուղղելու պահանջատիրությամբ, հարցը խաղաղ ճանապարհով լուծելու մտայնությամբ:
Բանալի բառեր՝ *ԼՂԻՄ, արցախահայություն, դիմում, պահանջատիրություն, պատմական անարդարություն*

А.Хачатрян

БОРЬБА НКАО ЗА ВЫХОД ИЗ СОСТАВА АЗЕРБАЙДЖАНА. ИСТОРИЧЕСКИЙ ЭКСКУРС К ТРЕБОВАНИЯМ АРМЯН АРЦАХА 1945-1991ГГ.

В статье автор анализирует заявления армян Арцаха, подготовленые и представленые в годы советской власти, главное требование которых - исправить историческую ошибку 1921 г. и вывести область из состава Азербайджана.

Главный вывод автора статьи заключается в том, что для армян Арцаха первостепенным являлась задача воссоединения с Родиной-матерью. Параллельно с этим, в заявлениях указывалось на результаты антиармянской политики Азербайджана и, на скопившиеся проблемы в социально-экономической жизни области. В 1988 году, в новых политических условиях, армянство Арцаха вступило в новую фазу борьбы, выступая с более решительными требованиями. В статье, автор попыталась показать, что на мирных митингах и в новых требованиях-заявлениях вновь подтверждалась та первоочередная национальная задача, истоки которой идут с 1921 года – исправить историческую несправедливость и вывести армянскую автономную область иа состава Азербайджана и воссоединить с Армянской ССР. В ответ на это, Азербайджан не только еще более ужесточил политическое и социал – экономическое давление на область, которое беспрерывно имело место в советское время, но и развязало войну.

Таким образом, борьба армян Арцаха с исторической точки зрения справедлива, она не была сепаратистским движением и не началась лишь в 1988 году, как это пытается представить азербайджанская пропаганда. Эта борьба, основанная на требовании исправить историческую ошибку мирным путем, беспрерывно продолжалась всегда .

Ключевые слова: *НКАО, армянство Арцаха, заявление, требование, историческая несправедливость.*

A.Khachatryan

THE STRUGGLE OF THE SELF-GOVERNING REGION OF NAGORNO-KARABAKH TO WITHDRAW FROM AZERBAIJAN. Historical review of submitted statements of Artsakh Armenians.(1945-1991 years)

In this paper the author reviewed the applications of Artsakh people made during the Soviet period which expressed their main demand to correct the historical mistake of 1921 and to transfer the region to Soviet Armenia.

On that basis, the author concluded that the national issue, which is to reunite with Motherland, was the first priority for Artsakh people. In the application the authors also noted about the results of Azerbaijans anti-Armenian policy and many problems in social and economic life of the region.In connection with the new political realities in 1988 the Artsakh people entered to a new phase of struggle expressing their demands more actively. In the paper the author tried to show that in peaceful mass meetings and in the new requests the Artsakh people restored the primary nationalissue, which is to transfer the Nagorno-Karabakh

Autonomous Oblast from Azerbaijan to Armenia and the historical origins of which go back to 1921. In response to that Azerbaijan not only increased political and socio-economic pressure which had been manifested during the Soviet period but also unleashed war.
Thus, the struggle of Artsakh people was historically justified. It was not a separatist movement and it did not break out in 1988 as Azerbaijan preachs. That struggle was continuous and the main purpose of it was to correct the historical mistake in a peaceful way.
Keywords: *NKAO, Artsakh people, application, demand, historical injustice*

1921 թ. հուլիսի 5-ի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին: Անտեսվեց Արցախի պատմական, ազգային, ժողովրդագրական, մշակութային միասնականությունը Մայր Հայաստանի հետ, խորհրդաքեմալական դաշինքի, պանթուրքիստական հեռագնա ծրագրի իրականացման նպատակով, տարածքը տրվեց Ադրբեջանին: Երկու տարի անց՝ 1923թ. հուլիսի 7-ին, Լեռնային Ղարաբաղին տրվեց ինքնավարություն: Ձևավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: 1918-1920թթ. արցախահայությունը ստիպված էր համառ ու անընդմեջ պայքար մղել օսմանյան ու կովկասյան թուրքերի դեմ: Արցախահայության լիազոր ներկայացուցիչների կողմից հրավիրված համագումարները մշտապես հաստատել են այն իրողությունը, որ Արցախը Հայաստանի անկապելի մասն է: Թուրքիայի պանթուրքիստական գաղափարախոսության արդյունքում ստեղծված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության՝ Արցախի նկատմամբ զավթողական նկրտումներին հագուրդ տալու նպատակով, 1921թ. հուլիսի 5-ին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովբյուրոյի որոշումը անօրինական էր, ընդունված միակողմանի, թուրք-ադրբեջանական դաշինքի և վերջինիս հովանավոր դարձած Խորհրդական Ռուսաստանի եռամիասնության արդյունքում: Գիտակցելով, որ այս անօրինական որոշումը չի արտահայտում ոչ պատմական արդարություն, ոչ առավել ևս հայության ազգային միասնական կամք, Մոսկվան ընկրկելով արցախահայության ըմբոստ համառ պայքարի առջև, Բաքվին պարտադրեց, որ նա համաձայն Կովբյուրոյի որոշման, Լեռնային Ղարաբաղին տա ինքնավարության կարգավիճակ: Ինչպես իրավացիորեն նշում է քաղաքագետ Ա. Մանասյանը, 1923թ.լայն իրավունքներով մարզային ինքնավարության կարգավիճակը Լեռնային Ղարաբաղին մատուցած նվեր չի եղել, այլ տրվել է որպես քաղաքական փոխհատուցում Խորհրդային Հայաստանից նրան բռնությամբ օտարելու և Ադրբեջանական ԽՍՀ սահմանները մտցնելու դիմաց[1]: Արցախում, որտեղ պետականության

[1] ***Մանասյան Ա****, Ադրբեջան-Արցախ հարյուրամյա հակամարտության փոխակերպումները իրադարձային հենքի և իրավաքաղաքական արդյունքների դիտակետից, «Բանբեր Երևանի համալսարանի», 2018, N2(26), էջ 8:*

գաղափարական ու պատմական դրսևորումները եղել են անընդմեջ, ինքնավարության հռչակումը դարձյալ պետականության յուրօրինակ դրսևորում էր, որով հնարավոր եղավ պահպանել մարզի հայեցի դիմագիծը, դիմակայել Ադրբեջանի հակահայկական քաղաքականության հարվածներին, պահպանել պատմական հիշողությունը և դառնալ 1988թ արցախյան վերածննդի հիմնաքար: Ինքնավարության ողջ ընթացքում, անտեսելով ադրբեջանական հայահալած ռազմավարությունը, խորհրդային իշխանության գաղափարական կապանքները, արցախահայությունը չի դադարեցրել պայքարը մարզը Ադրբեջանի կազմից դուրս հանելու և Հայկական ԽՍՀ-ին միավորելու համար: Հատկանշական է այն հանգամանքը, որ արցախահայության կազմած բոլոր դիմում-նամակներում սկսած 1962-1988թթ.ակնհայտորեն երևում են մարզի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, մշակութային, գիտակրթական ոլորտներում առկա հիմնախնդիրները և ակնհայտ հակահայկական քաղաքականության հետևանքները: Հարկ է ընդգծել, որ թե խորհրդային տարիների, թե՛ շարժման տարիներին գրված դիմումներում հիմնական առանցքային պահանջը պատմական անարդարությունն ուղղելու պահանջն էր, անխտիր բոլոր դիմումներում շեշտվում էր Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը Արցախի նկատմամբ, փաստերով ապացուցվում Ադրբեջանի կողմից մարզի հայաթափմանն ուղղված ռազմավարական խնդիրը: Առավել հայահալած ու ցեղասպան քաղաքականություն Ադրբեջանը որդեգրեց 1988թ., երբ արցախահայությունն ավելի վճռական պայքարի ելավ:

1945թ. նոյեմբերի Հայկական ԽՍՀ-ի կենտկոմի գլխավոր քարտուղար Գ. Հարությունյանի՝ Ստալինին ուղղված նամակում նշվում էր, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միասնական տնտեսական դաշտի մասին, շեշտվում 153 հազար բնակչության կազմում 97% կազմող (137 հազար) հայերի, ըստ այդմ մայրենի լեզվով կրթություն ստանալու, հայկական մշակույթի հետ հաղորդակցվելու անհրաժեշտության մասին: Հարությունյանը նամակում խնդրում էր քննարկման առարկա դարձնել մարզը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցը: 1962թ. մի խումբ արցախցիների կողմից Խրուշչյովին ուղղված նամակում նշվում էր, Ադրբեջանի իշխանությունների ցուցումներով ճնշվում էր տեղական ցանկացած նախաձեռնողականություն: «Ինքնավար մարզի մասին որոշումը գործում էր ոչ ամբողջ ուժով, իսկ հաճախ մերժվում հանրապետական իշխանությունների կողմից» (նկատի ունի ադրբեջանական): Ժամանակի ընթացքում տեղի ունեցավ այն, որ հայկական կրթական հաստատություններում բացառվում էր մայրենի լեզվով հայ ժողովրդի պատմության և աշխարհագրության դասավանդումը: Հայ մշակույթի զարգացումը կրել է բազմաթիվ խոչընդոտներ և արգելքներ, կաղապարների մեջ էր առնված հայ ազգային մտածելակերպը, բացակայում էին մշակութային կապերը մայր Հայաստանի հետ: Նամակի

հեղինակները խնդրում էին մարզը միացնել Հայաստանին, նշելով, որ Ղարաբաղի ժողովուրդը լավ գիտե, որ մարզի միացումը Ադրբեջանին հանդիսանում է ազգային ինքնորոշման խախտման կոպիտ քայլ: Այդ նույն բովանդակությամբ է հնչում 1992թ. ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության դիմումը՝ ուղղված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին, պետությունների ընկերակցություններին, աշխարհի պետություններին, որտեղ ասված է, որ Լեռնային Ղարաբաղը պետական, իրավական, օրենսդրական ոչ մի մարմնի կողմից երբեք չի մտել Ադրբեջանի կազմը: Միայն 1921թ. հուլիսին համաշխարհային հեղափոխության ցնորամիտ պատրանքներով տարված իրավական, օրենսդրական կարգավիճակ չունեցող Կոմունիստական կուսակցության Կոկասյան Հատուկ մարմնի կողմից, առանց ժողովրդի կամքը հարցնելու, Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին[1]:

1963 թ. ԼՂԻՄ-ի և հարակից հայկական շրջանների շուրջ 2500 հայերի՝ ԽՍՀՄ կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար և նախարարների խորհրդի նախագահ Ն. Խրուշչյովին ուղղված դիմումում հստակ երևում է, որ արցախահայությունը երբեք չի հրաժարվել իր ազգային ինքնության վերականգնման, ապօրինի 1921թ. որոշումը չեղարկելու անհողդողդ կամքից: Հատկանշական է այն փաստը, որ դիմումում նախ՝ վեր է բարձրացվում իրենց սեփական հայրենիքում խաթարված իրավունքները, պատմական արդարությունը վերականգնելու պահանջը, հետո՝ միայն ներկայացվում մարզում ստեղծված սոցիալ-տնտեսական կացությունը Ադրբեջանի հակահայկական քաղաքականության հետևանքով:

Դիմումում նշվում էր այն փաստը, որ հնուց ի վեր արցախահայությունն ապրել է Քուռի, Արաքսի և Սևանա լճի միջև, և պատմականորեն հողն այդ կոչվել է «Արցախ», որն անընդհատ ենթարկվել է քոչվորների արշավանքներին: 1921 թ. մարտին կնքված պայմանագրով Արցախը ապօրինաբար տրվել է Ադրբեջանին, իսկ 1923 թ. նրա լեռնային մասին տրվել է ինքնավարություն, իսկ գերակշռող հայկական ազգաբնակչությամբ Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Շահումյանի շրջանները (շուրջ 90%) մտցվեցին Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմ:

Այս և 1965թ. գրված դիմումների մեջ հեղինակները վեր են բարձրացնում մարզում Ադրբեջանի վարած հակահայկական քաղաքականության արդյունքում ստեղծված ծանր կացությունը: 1965 թ. գրված դիմումում ակնհայտորեն արտացոլվում է մարզի մշակութային կյանքի ողջ պատկերը: Դիմումում նշվում էր այն փաստը, որ ինքնավարությունը ինքնին մշակութային է, ինչը պետք է հնարավորություն ընձեռի ազգի ազատ զարգացման համար: Սակայն ադրբեջանական իշխանությունների կողմից վարած քաղաքականությունն ընդհակառակը ստեղծում էր լուրջ

---

[1] *Տե՛ս ԼՂՀ Պետական արխիվ, ֆոնդ1, ցանկ 2, պահպանման միավոր 290, կապ 51, թերթ 7-9*

խոչընդոտներ հայկական մշակույթի, նրա արցախյան հատվածի մայր հայրենիքի մշակույթի հետ հաղորդակցման ճանապարհին: Այսպես, մարզային բոլոր կազմակերպություններում գործավարությունը տարվում էր ոչ հայերեն: Նույնն էլ բոլոր պետական մակարդակի խորհրդակցություններում ու ժողովներում: Ինքնավար մարզը 1965 թ. չուներ իր հրատարակչությունը, պարբերական գրական-գեղարվեստական օրգանը, չուներ երիտասարդական, կամ լուսավորական հարցեր լուսաբանող որևէ թերթ: Մարզի գրողների աշխատությունների հրատարակման գործը խոչընդոտվում էր: Խղճուկ վիճակում էր մարզի դրամատիկական թատրոնն ու երգի, պարի համույթը: Արցախում չէին կարող բնակիչները լսել մայր Հայաստանի ռադիոձայնը:

Փաստորեն, դիմումում հստակ երևում է մարզի սոցիալ-տնտեսական, հասարակական- քաղաքական, մշակութային կյանքում ստեղծված ողջ խեղաթյուրումների պատկերը: Այս մասին ասված է նաև 1988 թ. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին ուղղված դիմումում: Դիմումում նշված էր, որ 70 տարիների ընթացքում Ադրբեջանը հետևողականորեն վարում էր Ղարաբաղի նկատմամբ քաղաքական, սոցիալ-տնտեսական և էթնիկական խտրականության քաղաքականություն: Քաղաքակիրթ աշխարհի առջև կատարվում էր գենոցիդ և էթնոցիդ հայ բնակչության նկատմամբ: 1988թ.փետրվարին, ոգևորված վերակառուցման քաղաքականության հովերով, արցախահայությունը ոտքի ելավ պատմության ճակատագրական սխալը ուղղելու նպատակով:[1]

1991թ. Մոսկվայի կոնֆերանսին ուղղված ԼՂԻՄ մարզկոմի, ժողովրդական պատգամավորների դիմումում նշված էր, որ 70 տարի է անցել Ղարաբաղի բռնակցումից Ադրբեջանին, արցախահայությունը բազմիցս դիմել է միութենական իշխանություններին իրենց ազատության և անվտանգության համար:

Արցախահայության կողմից կազմված դիմումներում հատկանշական է այն փաստը, որ վեր է բարձրացվում Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանի կազմից հանելու հարցը, այն հիմնավորվում պատմական ճշմարտությունն ու արդարությունը վերականգնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև ներկայացվում արցախահայության նկատմամբ Ադրբեջանի վարած հակահայկական քաղաքականության հետևանքները մարզում: Իրավամբ կարելի է ասել, որ արցախահայության ազգային ինքնագիտակցության, մայր Հայաստանի հետ միասնական ճակատագիր ունենալու անցյալն ու ներկա կամքը թելի պես անցնում է 70 տարիների առանցքում, իսկ սկսած 1988 թ-ից, ստեղծված նոր իրողություններով պայմանավորված, շարունակվում և ավելի զանգվածային ու բուռն դառնում: 1966թ. ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Ի. Բրեժնևին, ԱԿԿ կենտկոմի առաջին

[1] *ԼՂՀ ՊԱ, ֆ.1, գ.2, պ.մ. 290, կ.51, թ. 7-9:*

քարտուղար Վ. Յու. Ախունդովին, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանին ուղղված դիմումում ասված էր. «Ղարաբաղը Հայաստան է տարածքով և ազգային կազմով, Հայաստան է՝ կենսաձևով, հոգևոր կերտվածքով ու կենցաղով: Ղարաբաղի պատմությունը՝ Հայաստանի պատմությունն է, հայկական է Ղարաբաղի լեզուն, արվեստը և գրականությունը»: Նամակում նշվում է, որ 1920թ. դեկտեմբերի 1-ին, Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո, Ադրբեջանական ԽՍՀ կառավարությունը վիճելի տարածքները, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղը, հռչակեց Հայկական ԽՍՀ անբաժանելի մաս ճանաչելու մասին դեկլարացիան, սակայն հետ կանգնեց իր հայտարարությունից: Հատկանշական է այն փաստը, որ նամակում առաջ է քաշվում ընդհանրապես տարածքային հարցը: Նշվում է, որ հայ ժողովրդի, ինչպես և աշխարհի բոլոր ժողովուրդների համար կենսական նշանակություն ունեն տարածքային հարցերը: Մեծագույն ողբերգություն համարելով Թուրքիայի կողմից Հայաստանի տարածքի ավելի քան 2/3 կազմող արևմտյան մարզերի բռնազավթումն ու այնտեղ շուրջ 1,5 միլիոն հայերի կորուստը՝ նամակում շեշտվում է այն գաղափարը, որ հայ ժողովուրդը ըմբռնումով է մոտենում ներկայումս Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքների վերադարձման հարցին, ինչը չի կարելի սակայն կիրառել Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

1921թ. տուրք տալով Թուրքիայի պանթուրքական ծրագրին՝ Խորհրդային Ռուսաստանը Նախիջևանը հանձնեց Խորհրդային Ադրբեջանի հովանավորության ներքո: Նույնը կատարվեց 94,4% հայ բնակչությամբ գերակշռող Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Այն մտցվեց Ադրբեջանի կազմ հիմք ընդունելով միայն այն մտացածին փաստարկը, թե իբր Ղարաբաղը հակված է դեպի Բաքու: Դիմումում իրավացիորեն նշվում է, որ չի կարող տնտեսական հակվածությունը գլխավոր հիմքը հանդիսանալ նման ազգային խնդրի լուծման համար, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ այն ժամանակ ողջ Հայաստանն էր տնտեսապես հակված դեպի Բաքու և Թբիլիսի, քանի որ գտնվում էր տնտեսապես ծայրահեղ ծանր պայմաններում: Այնուհետև նշվում է, որ «ներկայումս այդ միակ փաստարկը վերացված է, նախ որովհետև խորհրդային իշխանության տարիներին Խորհրդային Հայաստանը ռուս մեծ ժողովրդի աջակցությամբ դարձավ ԽՍՀՄ ինդուստրիալ հանրապետություններից մեկը և այժմ լիովին ի վիճակի է ապահովելու Լեռնային Ղարաբաղի տնտեսական հաջող զարգացումը»[1]: Մանավանդ, որ Ադրբեջանի կազմում ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական կյանքում ստեղծվել էին լուրջ խնդիրներ: Այո՛ ըստ 1921թ.հուլիսի 5-ի որոշման, Ղարաբաղը միացվեց Ադրբեջանին հաշվի առնելով հայերի և մուսուլմանների միջև համեշխության հաստատման անհրաժեշտությունը և տնտեսական հակվածության

[1] ***Խաչատրյան Գ., Աբրահամյան Հ.***, *նշված. աշխ., էջ 72*

գործոնը: Ենթադրվում էր, որ Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղը սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման տեսանկյունից լավ պայմաններում կհայտնվի: Սակայն դա տեղի չունեցավ: Ոչ միայն արագընթաց զարգացում տեղի չունեցավ, այլև մեծ տարբերություններ ստեղծվեցին ինքնավար մարզի զարգացման սոցիալ-տնտեսական ցուցանիշների և ադրբեջանական մյուս շրջանների համապատասխան ցուցանիշների միջև: Հատուկ քաղաքականություն էր տարվում մարզի արտադրողական ուժերի զարգացմանն արհեստականորեն խոչընդոտելու և ԼՂԻՄ-ը Ադրբեջանի հումքային կցորդ ընդունելու համար: ԼՂԻՄ-ը համախառն ներքին արդյունքի և բնակչության մեկ շնչի հաշվով ազգային եկամուտի ցուցանիշներով զգալիորեն զիջում էր Ադրբեջանի մյուս շրջաններին: Դիմումներ գրվեցին 1973թ.՝ ուղղված Բրեժնևին, Հայկական ԽՍՀ կոմ. Կուսակցության առաջին քարտուղար Ս. Քոչինյանին: Առանձին մտավորականներ (Միրզոյան Բ., Խանզադյան Ս., Կապուտիկյան Ս., Կիրակոսյան Ջ., Ե. Քոչար, Լ. Հուրունց, և այլք) իրենց դիմումներում վեր էին բարձրացնում Լեռնային Ղարաբաղի հարցը, ստեղծված կացությունը, արցախցիների իրավունքները ոտնահարելու ադրբեջանական իշխանությունների վարած քաղաքականությունը: 1980թ. փետրվարի 23-ին Բրեժնևին նոր դիմում է հղվել Հադրութի շրջանի մի շարք գյուղերի աշխատավորների կողմից, որտեղ ներկայացվում է մարզում ստեղծված կացությունը և կոչ արվում միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս հանելու և Հայկական ԽՍՀ-ին միացնելու ուղղությամբ:

1988թ. քաղաքական բարենպաստ պայմաններում, այսպես կոչված գորբաչովյան վերակառուցման շրջանում, վեր հառնեց արցախյան հիմնահարցը, որը ոչ թե մարել էր, այլ պարզապես անթեղվել խորհրդային իշխանության ժամանակաշրջանի անբարենպաստ պայմաններում: Այն կրկին հայտնվեց օրակարգում՝ պատմական արդարության վերականգնման ակնկալիքով: 1988թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ արտահերթ գումարման նստաշրջանը ընդունեց պատմական որոշում դիմելու Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կողմից՝ Հայկական ԽՍՀ կազմի մեջ ընդգրկելու համար[1]: Որոշման մեջ ասված էր, որ արտահայտելով ԼՂԻՄ աշխատավորության, ժողովրդական պատգամավորների, շրջանային և քաղաքային խորհուրդների, ինչպես նաև մարզի բնակչության կամքը՝ նստաշրջանը խնդրում է խոր ըմբռնումով մոտենալ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը և լուծել մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից՝

[1] *ԼՂՀ պետականարխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, պահպանմանմիավոր 263, կապ 25, թերթ 1:*

Հայկական ԽՍՀ կազմ ընդգրկելու հարցը, միաժամանակ դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին հարցը դրական լուծելու ակնկալիքով:

1988-ի պատմական որոշումը տրամաբանական շարունակությունն է արցախյան հիմնահարցի բազմաթիվ քննարկումների, որի ակունքներն իջնում են մինչև 1918թ.: Այն հերթական օղակն էր արցախյան հիմնախնդրի պատմական շղթայի: Սակայն արցախահայության արդարացի պահանջին, Ադրբեջանը պատասխանեց հակահայկական ջարդերով /1988թ. փետրվար, հոկտեմբեր, 1990թ. հունվար, 1991թ. ապրիլ-մայիս/, տնտեսական շրջափակմամբ:

1991թ. մայիսի 29-ին մարզային գործկոմի ժողովրդական պատգամավորների կողմից դիմում հղվեց ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշին, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտտերանին, ԳՖՀ կանցլեր Գելմուտու Կոլեին, Միացյալ թագավորության վարչապետ Ջոն Մեյջերին, Ճապոնիայի վարչապետ Տոսիկո Կայֆուին, Իտալիայի հանրապետության նախարարների խորհրդի նախագահ Ջուլիո Անդրեոտտին, Կանադայի վարչապետ Բրայան Մալրունիին: Դիմումում ասված էր, որ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխարհի զարգացած և առաջատար երկրների միջև սերտ տնտեսական և քաղաքական համագործակցությունը պետք է հանդիսանա ողջ աշխարհում կայունության և խաղաղության երաշխիքը, հաշվի առնելով յոթյակ պետությունների դերն ու ազդեցությունը աշխարհում տեղի ունեցող իրադարձություններում, ինչպես նաև ընդգծելով այդ պետությունների պատասխանատվությունը մարդկության առջև, խնդրում ենք կանգնեցնել Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության նկատմամբ կատարվող ցեղասպանությունը, որին զոհ են գնում անմեղ, խաղաղ մարդիկ: Դիմումի մեջ նշվում է, որ այդ գործողությունների հեղինակը ԽՍՀՄ ղեկավարությունն է[1]: Միաժամանակ նշվում էր, որ իրավահավասարության և իր ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու ժողովուրդների իրավունքների սկզբունքներից ելնելով, որոշել արցախահայության ներքին և արտաքին քաղաքական ստատուսը, ինչպես նաև առաջիկա Լոնդոնում կազմակերպվելիք «յոթյակի» հանդիպման ժամանակ, քննարկել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը ԽՍՀՄ տարածքից դուրս գալու և քաղաքական ապաստան տրամադրելու հարցը, ազդել Խորհրդային Միության ղեկավարության վրա՝ արցախահայության նկատմամբ ցեղասպանության քաղաքականությունից հրաժարվելու համար:

1991թ. մայիսի 17-ին նոր դիմում հղվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Պերես Դե Կուէյարին, ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշին, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտտերանին, Ամերիկայի, Եվրոպայի, Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Սինգապուրի, Ֆիլիպինների նախագահներին: Դիմումում ասված էր, որ Լեռնային Ղարաբաղի

---

[1] *Տե՛ս ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 299, կ.50, թ. 4*

հայության բռնի տեղահանման քաղաքականությունը իրենց հայրենի հողից, ոչ միայն չի կանգնեցվում, այլ նույնիսկ հասնում են վտանգավոր սահմանների: «Լեռնային Դարաբաղը, ասված էր դիմումում, այժմ դարձել է ազգայնամոլության, բացահայտ ատելության և պետական ահաբեկչության դաշտ' թելադրված ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից»[1]: «Ըստ էության ԽՍՀՄ և Ադրբեջանական իշխանությունների կողմից լրիվությամբ ոտնահարվում են Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները»: Բոլոր դիմումներում նշվում էր, որ ԼՂԻՄ-ում կոպիտ կերպով ոտնահարվում են հայ բնակչության սահմանադրական իրավունքները, ընդհուպ մինչև ԼՂԻՄ-ի օրինական իշխանությունների լուծարումը, արցախահայությունը ենթարկվում է բարոյական, քաղաքական, ֆիզիկական ճնշման ընդհուպ մինչև բացահայտ բռնություն և մարդկային արժանապատվության ստորացում: Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի, Շամախիրի, Շամքորի, Խանլարի և Դաշքեսանի շրջաններում տեղի ունեցած դեպքերը Ադրբեջանի որդեգրած հայաջինջ քաղաքականության մասին են վկայում:

1991թ. Ադրբեջանի ղեկավարությունը որոշում ընդունեց Շահումյանի շրջանը լուծարելու և այն Գերանբոյի շրջանի մեջ մտցնելու մասին: 1991թ. հունվարի 15-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահի տեղակալ Գ.Յանաեվին, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահ Ա.Ի.Լուկյանովին և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին հղած դիմումում ասվում էր, որ Ադրբեջանի կողմից որդեգրած արցախյան հիմնախնդրի լուծման տարբերակն արդեն բացահայտ իրականացվում է: Դիմումում արցախահայությունն իր բողոքն էր հայտնում Շահումյանի շրջանի՝ պատմական Գյուլիստանի մելիքության լուծարման և այն Ադրբեջանական շրջանի մեջ ներառելու մասին: «Շրջանը - /Շահումյանի Ա.Ա./100 տոկոսանոց հայ բնակչությամբ, կազմվեց 1930թ.: 1940թ. նրա կազմի մեջ ընդգրկվեցին 4 գյուղխորհուրդներ հարևան ադրբեջանական շրջաններից, ինչպես տեսնում ենք հեռու գնացող նպատակներով»[2]: Դիմումում խնդրվում էր պահպանել Շահումյանի շրջանը որպես վարչատարածքային միավոր:

Արցախահայության համար չափազանց ծանր այս ժամանակաշրջանում, ԼՂԻՄ մարզային գործկոմի ժողովրդական պատգամավորների, շրջանային խորհուրդների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ղեկավարների կողմից հաճախ էին կազմվել բողոքի դիմումներ կամ խնդրագրեր ուղղված ԽՍՀՄ միութենական իշխանություններին, ինչպես նաև ՄԱԿ-ի, եվրոպական մի շարք երկրներին, ԱՄՆ-ի ղեկավար շրջանակներին արցախյան հիմնահարցի վրա վերջիններիս ուշադրությունը սևեռելու համար: Պատմական տարբեր

---

[1] *ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 299, կ.50, թ. 17*

[2] *ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 299, կ.50, թ. 49;*

ժամանակաշրջաններում հայությունն իր անկախությունը վերականգնելու նպատակով, շարժում կազմակերպելու համար, օժանդակության դիմումնագրեր է հղել այս կամ այն տերության հասցեով: Սակայն պատմության մեզ ավանդած դասերը ցույց տվեցին, որ իրական տեղաշարժ հօգուտ ժողովրդի ազատագրական շարժման մեջ արձանագրվեց այն պահին, երբ այդ շարժումը կողմնորոշվեց դեպի սեփական ուժերին ապավինելու գործոնը, երբ բարձրացվեց համազգային պայքարի դրոշ: Արցախահայության արդարացի պայքարը, ազատագրական շարժումը ևս աչքի ընկավ արցախահայության հանդեպ ադրբեջանցիների իրագործած բարբարոսությունների նկատմամբ բողոքի և դիմումների կազմամբ, որոնց բովանդակությունից և հասցեագրումներից կարելի է կազմել մի քանի կարևոր եզրակացություններ: Սկզբնական շրջանում այդ դիմումները հղվում էին միութենական իշխանությունների հասցեով: Այսպես 1991թ. հունվարի 22-ին ԽՍՀՄ նախագահ Գորբաչովին, տեղակալ Յանաեվին, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահ Լուկյանովին, Ներքին գործերի նախարար Պուգոին և ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներին ԼՂԻՄ-ի աշխատավորության անունից հղած դիմումում ասվում էր. «Մենք, ԼՂԻՄ-ի աշխատավորներս, դադարեցնելով արդյունաբերական ձեռնարկու-թյունների, շինարարական կազմակերպությունների, առողջապահական և լուսավորական հիմնարկների, կենսագործունեության այլ օբյեկտների աշխատանքը, դուրս ենք եկել բողոքի ընդդեմ Լեռնային Ղարաբաղի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության' 3 տարի շարունակվող բացահայտ տեռորի և բռնությունների:

Մեզ միանգամայն պարզ է ադրբեջանական ղեկավարության կողմից իրականացվող քաղաքականության նպատակը, որն արդեն շարունակվում է շուրջ 70 տարի: Մեզ միայն անհասկանալի է երկրի ղեկավարության /ԽՍՀՄ - Ա.Ա./ բռնած դիրքորոշումը այս սուր կոնֆլիկտում»[1]: Այնուհետև դիմումում ասվում էր, որ հավատալով վերակառուցմանը և աջակցելով նրան, արցախահայությունը որպես պատասխան ստացավ արտակարգ իրավիճակ փաստացի ռազմական իրադրության պայմաններում, մարզի շրջափակում, պետական մարմինների լուծարում, որին հետևեցին բազմաթիվ ձերբակալություններ, շարժման ակտիվիստների նկատմամբ վայրագություններ, հակահայկական տրամադրություններ: Վերջում նշված էր, որ մինչև արցախյան հիմնախնդրի քաղաքական լուծումը, պահանջում ենք ճանաչել ԼՂԻՄ մարզխորհրդի և մարզային գործկոմիտեի լիազորությունները[2]: Եվ ԼՂԻՄ-ի տարածքից հանել Ադրբեջանի հանրապետության զինված ուժերին:

---

[1] *ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 308, կ.52, թ. 1:*

[2] *Վերջինիս լիազորությունները դադարեցվեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989թ. հունվարի 12-ի հրամանով:*

ԽՍՀՄ ղեկավարության հասցեով 1991թ. փետրվարի 6-ին հղած դիմումում ասվում էր. «Ադրբեջանն իր քաղաքականությամբ ավելի է սրում իրավիճակը, ուժեղացնում մեր վճռականությունը ազատ կյանքի ձգտման, մեր նախնիների հողի լիիրավ տերերը լինելուն: Մեզ ոչ ոք չի կարող մեր ընտրած ուղուց շեղել, այդ ուղին ընտրել է ժողովուրդը, որն իր կամքն է արտահայտել բոլոր մակարդակների ժողովրդական պատգամավորների խորհրդի նստաշրջաններում, միութենական իշխանություններին ուղղված դիմումներում»[1]: 1991թ. փետրվարին տեղի ունեցած բազմահազարանոց ցույցի աշխատավորների կազմած դիմումում, որն ուղարկվեց միութենական իշխանություններին, ասվում է, որ 1988թ. պատմական որոշումը դարձավ ժողովրդի կամքի արտահայտություն, որը շուրջ 70 տարի ձգտում է միավորվել Հայկական ԽՍՀ-ին, որի կամքին հակառակ 1921թ. այն բռնակցվեց Ադրբեջանին: Սակայն այս հարցում ինչպես նշված էր դիմումում, Ադրբեջանը բռնեց վերակառուցման ոգուն և գաղափարին ոչ համապատասխան դիրքորոշում, որի պատճառով էլ մեր «ժողովրդա-վարական պայքարը վեր ածվեց ազգամիջյան կոնֆլիկտի»[2]: Անարդարացի կերպով հայ ժողովրդից մասնատված մի հատվածի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունները գործի դրեցին համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և ազատությունների դժոխային ճնշման եղանակներ: Ողջ Ադրբեջանական ԽՍՀ-ում մեր հայրենակիցների նկատմամբ կազմակերպված զանգվածային ջարդերից ու սպանություններից հետո ԼՂԻՄ-ը զրկվեց պետական, կուսակցական և հասարակական իշխանություններից: Ահա այսպիսի քաղաքականություն էր որդեգրել Ադրբեջանը: Մինչ հայկական կողմը բարձրացնում էր իր արդարացի ձայնը անջատվել Ադրբեջանից և միանալ Հայաստանին, Ադրբեջանի ղեկավարությունը ամեն կերպ փորձում էր ոչ միայն խլացնել այն, այլ նաև հարցը մտցնել փակուղի: Այսպիսով՝ արցախահայության արդարացի պահանջը հիմնավորված պատմական անհերքելի փաստարկներով, ինչպես միշտ մնում էր անպատասխան: Դրան ի պատասխան՝ Ադրբեջանը Արցախի նկատմամբ սանձազերծեց լայնամասշտաբ պատերազմ: Ճիշտ կողմնորոշվելով ստեղծված իրավիճակում, արցախահայությունը, դրսևորելով իր անշեղ ու հստակ պատմական կամքը, 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց ԼՂՀ անկախությունը, սակայն միաժամանակ հայությունը ստիպված էր զինված պայքարով տեր կանգնել իր հայրենի երկրամասի նկատմամբ ունեցած լիիրավ իրավունքներին:

Այսպիսով՝ ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ արցախահայության պայքարը Լեռնային Ղարաբաղը մայր Հայաստանի հետ վերամիավորելու համար պատմական բոլոր ժամանակաշրջաններում

---

[1] *Նույն տեղում, թ. 5*

[2] *ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 308, կ.52, թ. 21:*

եղել է անընդմեջ, անշեղ: Արցախահայության մոտ միշտ էլ վառ է եղել պատմական հիշողությունը, երկրամասի նկատմամբ 1921թ. ընդունված որոշումը իրավացիորեն գնահատվել որպես կատարված պատմական անարդարություն, որի հետ երբևիցե Արցախի բնակչությունը չհաշտվեց, հետևաբար անհիմն են ադրբեջանական այն պատմիչների, գործիչների արտահայտությունները, ըստ որոնց արցախյան շարժումն ընդամենը անջատողական, մի խումբ սեպարատիստների կողմից ստեղծված շարժում էր, որը ծագել է հենց 1988թ.: Այդ վարկածի անհիմն լինելու մասին են վկայում խորհրդային շրջանում արցախահայության կողմից գրված բազմաթիվ դիմումները, որոնցում շեշտվում է 1921թ. տեղի ունեցած անարդարացի քայլը: Մեր համոզմամբ արցախահայության պայքարը առաջին հերթին ազգային խնդրի լուծման պայքար էր, այլ ոչ թե սոցիալ-տնտեսական կեցության հիմնախնդիրների: Ճիշտ է դիմումներում բազմիցս նշվել է մարզի սոցիալ-տնտեսական կուտակված խնդիրների մասին, սակայն առաջին հերթին ընդգծվել է պատմական անարդարությունն ուղղելու, մարզը Ադրբեջանի կազմից դուրս հանելու և մայր Հայաստանի կազմում ընդգրկելու հստակ պահանջ, իսկ սոցիալ-տնտեսական, մշակութային բազմաթիվ հիմնախնդիրները ստորադասվել են գլխավոր պահանջին, ներկայացվել որպես կատարված պատմական սխալի հետևանք, որպես Ադրբեջանի հակահայկական քաղաքականության դրսևորում, մարզը հայաթափելու նպատակ: Եթե նույնիսկ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման պատկերը լիներ գոհացուցիչ՝ համապատասխան ներկայացված ուռճացված թվերին, միևնույն է արցախահայությունը շարունակելու էր պայքարը, քանի որ նրանց պահանջը հայկական Արցախը Հայաստանի հետ վերամիավորման պահանջն էր: Այսպիսով՝ 1988թ., ոգևորված նոր քաղաքական իրողություններով, Արցախը կրկին բարձրացրեց վաղուց ծխացող հարցը: Պայքարի սկզբում, ինչպես և նախորդ շրջաններում արցախահայությունը որդեգրել էր խաղաղ, դիմումների հղման ձևաչափով պայքարի մարտավարությունը և ինչպես միշտ այս անգամ ավելի սանձարձակ կերպով Ադրբեջանի իշխանությունները որդեգրեցին հայությանը ճնշելու, մարզը հայաթափելու հին փորձված մարտավարությունը, շարժումն իր սաղմի մեջ խեղդելու ռազմավարությունը: Վստահորեն կարելի է ասել, որ պանթուրքիզմի գաղափարախոսությամբ սնված, ստեղծված Ադրբեջանական պետության վարքագիծը եղել է նույնը թե՛ խորհրդային իշխանության, թե հետագա տարիներին, որին ի պատասխան՝ արցախահայությունը ոտքի կանգնեց իր օրինական իրավունքները պարտադրելու նպատակով:

Գրականություն

1. Մանասյան Ա, Ադրբեջան-Արցախ հարյուրամյա հակամարտության փոխակերպումները իրադարձային հենքի և իրավաքաղաքական արդյունքների դիտակետից, «Բանբեր Երևանի համալսարանի», 2018, N2(26):
2. Խաչատրյան Կ., Աբրահամյան Ն., Հայության պայքարը ԼՂՀՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2011:
3. Валесян Л., Мурадян Ю., о некоторых итогах и проблемах экономического развития Нагорного Карабаха, Вестник общ. Наук, стр. 10.
4. ԼՂՀ Պետական արխիվ, ֆոնդ1, ցանկ 2, պահպանման միավոր 290, կապ 51, թերթ 7-9
5. ԼՂՀ ՊԱ, ֆ.1, ց.2, պ.մ. 290, կ.51, թ. 7-9:
6. ԼՂՀ ՊԱ, ֆ.1, ց. 2, պ.մ. 263, կ. 25, թ. 1
7. ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 299, կ.50, թ. 4
8. ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 299, կ.50, թ. 1ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 299, կ.50, թ. 49;
9. ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 299, կ.50, թ. 49:
10. ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 308, կ.52, թ. 1:
11. ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 308, կ.52, թ. 4:
12. ԼՂՀՊԱ, ֆ. 1, ց. 1, պ. մ. 308, կ.52, թ. 21:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ռ. Բալայանը